# Շիրխանի /  Shirkhani

*Թաք բալա, շիրխանի,*
*Նանան քեզի հեյր անի:*
*Փայանջուկին տեր ըլի,*
*Հարութին տամ, խեր ըլի:*

*T'ak' bala, shirkhani,*
*Nanan k'ezi heyr ani.*
*P'ayanjukin ter əli,*
*Harut'in tam, kher əli.*

1. Թագավորին ղալամ մազ, շիրխանի,
Նանայի մինուճարն իս, շիրխանի:

1. T;agavolin ghalam maz, shirkhani,
Nanayi minucharn is, shirkhani.

*Թաք բալա, շիրխանի*
*Նանան ջոջ բազըրգյանի:*
*Նանան կերթա նըմզարի,*
*Կակոն կելնի մըր գեղին:*

*T'ak' bala, shirkhani*
*Nanan joch' bazərgyani.*
*Nanan kert'a nəmzari,*
*Kakon kelni mər geghin.*

2. Թըմբլա պոլոզ իմ բալա, շիրխանի,
Կարմիր քոլոզ իմ բալա, շիրխանի:

2. T'əmbla poloz im bala, shirkhani,
Karmir k'oloz im bala, shirkhani.

*Թաք բալա, շիրխանի,*
*Նանան քեզի ղուրբանի:*
*Սոլեր արծըթե շինած,*
*Շապիկ սուրմա թել նախշած:*

*T'ak' bala, shirkhani,*
*Nanan k'ezi ghurbani.*
*Soler artsət'e shinats,*
*Shapik surma t'el nakhshats.*

3. Կարմի՛ր արև իմ բալա, շիրխանի,
Էրգենանար իմ բալա, շիրխանի:

3. Karmir arev im bala, shirkhani,
Ergenanar im bala, shirkhani.